ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2020 թ. N _____-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն).

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատուն է հանդիսանում Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմը.

3) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
3.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
4.	ԱՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ		
5.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Ա. ԼԱԶԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Բախչիյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ա որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2020 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորագույն և առաջատար ճյուղերից մեկը, որը բնակչությանը պարենային ոլորտում ապահովում է կենդանական ծագման մթերքներով (միս, կաթ, ձու և այլն), իսկ արդյունաբերությանը՝ հումքով (կաշի, բուրդ, փետուր և այլն):

Անասնաբուծությունում կարևոր նշանակություն ունեն անասնապահության կանոնակարգումը, արոտավայրերի ռացիոնալ օգտագործումը, դրանց որակական հատկանիշների, ինչպես նաև դեգրադացիայի կանխարգելման նպատակով ենթակառուցվածքային օբյեկտների (արոտային ենթակառուցվածքների օբյեկտներ) բարելավումը:

Զարգացած անասնաբուծություն ունեցող երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արհեստական (ցանովի) արոտավայրերի հիմնադրմանը, որն իրենից ներկայացնում է բարձրարժեք կերային կուլտուրաներով ցանված տարածքներ, որոնց հիմքում ընկած է գիտականորեն հիմնավորված ագրոտեխնիկական միջոցառումների համակարգ՝ նպատակաուղղված բարձր բերքատու խոտածածկի ստեղծմանը:

Արոտավայրերի արդյունավետ շահագործումը և որակական հատկանիշների պարբերաբար բարելավումը կախված է նրա օգտագործման և բարելավման ճիշտ պլանավորումից, պլանավորված միջոցառումների հետևողական իրականացումից:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պլանավորվում և սահմանվում են համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված արոտավայրերի սահմանները, արոտավայրեր տանող ուղիները և արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույցը:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***արոտային ենթակառուցվածքների օբյեկտներ՝*** կառույցներ (այդ թվում՝ կենդանիների սեզոնային պահվածքով պահման համար), կամուրջներ, արոտավայր տանող ճանապարհներ, կենդանիների հանգստյան վայրեր, կենդանիների ջուր խմելու համար նախատեսված հարմարանքներ (նովեր).

2) ***արոտավայր՝*** գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված գյուղատնտեսական նշանակության հողեր.

3) ***արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույց՝*** համայնքի վարչական սահմաններում և (կամ) տիրապետության տակ գտնվող արոտավայրերի օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովման նպատակով գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամանակացույց.

4) ***արոտավայրերի մակերեսային բարելավում՝*** արոտավայրերի մաքրում թփուտներից, ծառաթփային բուսականությունից և կույտավորում, բացառությամբ անտառների կայուն կառավարման բնագավառում պետական լիազոր մարմնի և համայնքի կողմից համատեղ առանձնացված (համարակալված) ծառերի.

5) ***ծառերի համարակալում***՝ կենդանիների հանգստի կազմակերպման և այլ նպատակների համար օգտագործվող ծառերի ճշգրտում և պայմանական նշանների ամրացում.

6) ***արոտների ջրարբիացում***՝ գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովելու նպատակով՝ արոտավայրերում ու արոտավայր տանող ճանապարհներին հարող տարածքներում ջրագծերի, նովերի կառուցում, վերանորոգում և ջրման համար նպաստավոր պայմանների ստեղծում.

7) ***արոտօգտագործող***՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը գյուղատնտեսական կենդանիների արածեցումով կերակրման նպատակով օգտագործող ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

8) ***հերթափոխ արածեցում***՝ արոտավայրերի բաժանում արոտակտորների և գյուղատնտեսական կենդանիների արածեցման կազմակերպում ըստ արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույցի.

9) ***օպտիմալ ծանրաբեռնվածություն***՝ արոտավայրերի՝ առանց բուսական կազմի արտադրողականությանը և էկոլոգիական ամբողջականությանը վնասելու, գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար միավոր գլխաքանակով ծանրաբեռնում:

Ծրագրով ներկայացվում են անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

I. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

Ծրագիրն ընդգրկում է Մարտունու շրջանի Ծովատեղ, Հերհեր, Խերխան, Մսմնա և Կավահան համայնքները (միասին այսուհետ՝ համայնքներ): Նշված համայնքների ընդհանրական նկարագրերն են.

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղական համայնքը գտնվում է ծովի մակարդակից 900 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 152 բնակիչ և 36 տնային տնտեսություն: Տեղակայված է Մարտունի շրջկենտրոնից 32, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 44 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքն ունի 497.5 հեկտար տարածք, որից 125.46 հեկտարը արոտավայրեր են:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 201, որից՝ կով 91 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 446 գլուխ: Խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 240.2 ցենտներ տավարի, 77.6 ցենտներ ոչխարի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2019 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2350 լիտր, ընդհանուրը՝ 2138.5 ցենտներ:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Հերհեր գյուղական համայնքը գտնվում է ծովի մակարդակից 850 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 567 բնակիչ և 127 տնային տնտեսություն: Տեղակայված է Մարտունի շրջկենտրոնից 29, իսկ մայրաքաղաք

Ստեփանակերտից՝ 42 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքն ունի 922.9 հեկտար տարածք, որից 262.30 հեկտարը արոտավայրեր են:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 170, որից՝ կով 76 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 89 գլուխ: Խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 200.6 ցենտներ տավարի, 15.5 ցենտներ ոչխարի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2019 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2 370 լիտր, ընդհանուրը՝ 1801.2 ցենտներ:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Խերխան գյուղական համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1000 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 140 բնակիչ և 32 տնային տնտեսություն: Տեղակայված է Մարտունի շրջկենտրոնից 33, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 46 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքն ունի 624 հեկտար տարածք, որից 351.10 հեկտարը արոտավայրեր են:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 109, որից՝ կով 50 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 40 գլուխ: Խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 132 ցենտներ տավարի, 7 ցենտներ ոչխարի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2019 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2 370 լիտր, ընդհանուրը՝ 1185 ցենտներ:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Մսմնա գյուղական համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1100 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 72 բնակիչ և 21 տնային տնտեսություն: Տեղակայված է Մարտունի շրջկենտրոնից 30, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 33 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքն ունի 738 հեկտար տարածք, որից 209.42 հեկտարը արոտավայրեր են:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 37, որից՝ կով 14 գլուխ: Խոշոր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 37 ցենտներ տավարի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2019 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2330 լիտր, ընդհանուրը՝ 326.2 ցենտներ:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Կավահան գյուղական համայնքը գտնվում է ծովի մակարդակից 950 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 68 բնակիչ և 21 տնային տնտեսություն: Տեղակայված է Մարտունի շրջկենտրոնից 36, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 28 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքն ունի 705.1 հեկտար տարածք, որից 68 հեկտարը արոտավայրեր են:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 78, որից՝ կով 35 գլուխ: Խոշոր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 92.4 ցենտներ տավարի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2019 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2330 լիտր, ընդհանուրը՝ 815.5 ցենտներ:

Համայնքներում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների պահվածքը կանոնակարգված չէ, որն էլ իր հերթին առաջ է բերում բազմաբնույթ խնդիրներ, ինչպես անասնաբուծությամբ, այնպես էլ բուսաբուծությամբ զբաղվողների համար:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված արոտավայրերը գերծանրաբեռնված են, չկան հերթափոխ արածեցման գործող մեխանիզմներ, ինչը տարիների ընթացքում պատճառ է հանդիսացել բարձրարժեք ընդեղեն կերաբույսերի տեսակների, ինչպես նաև ստացվող կերի քանակի և որակի նվազեցման համար: Արոտավայրերի գերակշիռ մասը թփակալված է, իսկ որոշ մասերում թունավոր և կերակրման համար ոչ պիտանի բույսերը գերակշռում են բուսածածկում: Արոտավայրերում կենդանիների համար խմելու ջրի բացակայության պատճառով արածեցման ենթակա ողջ գլխաքանակը խմելու ջրից օգտվելու համար պարբերաբար ստիպված է լինում խմել լճակներից, որն իր հերթին առաջացնում է հիվանդություններ և բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական կենդանիների մթերատվության վրա՝ 10-25 տոկոսով նվազեցնելով կենդանիների կաթնատվությունը և 25-30 տոկոսով քաշաճը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սույն Ծրագրի նպատակն է բացառել արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու հայտնվելու դեպքերը, ստեղծել նախադրյալներ համայնքներում անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման համար, ինչի շնորհիվ, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ, բարձրացնել արոտների արդյունավետությունն ու կերային արժեքը, վերականգնել բուսածածկը, կանխել հողերի հետագա դեգրադացման վտանգը, ստեղծել նախադրյալներ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման, նախրի և հոտի կառավարիչների համար աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև անասնաբուծության և բուսաբուծության զարգացման և գյուղացիական տնտեսությունների կենսամակարդակի բարձրացման համար:

2. Սույն Ծրագրի խնդիրներն են՝

1) անասնաբուծության կանոնակարգման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների, առկա արոտավայրերի լիարժեք օգտագործման և արոտավայրերի բարելավման համար հնարավորությունների ստեղծումը, արոտավայրերի բերքատվության բարձրացումը.

2) արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովումը.

3) արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիների հերթափոխով արածեցման կազմակերպումը.

4) Ծրագրի հետևողական իրականացմամբ համայնքների բնակչության եկամուտների ավելացումը:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

3. Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համայնքներում արոտավայրերի արդյունավետ կառավարման նպատակով 2020 թվականի ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) արոտավայրերի ջրարբիացում. համայնքային արոտավայրերի սահմաններում գտնվող վայրերում կենդանիների ջուր խմելու համար նովերի տեղադրում, հին նովերի վերանորոգում, ջրագծերի անցկացում և այլ աշխատանքների իրականացում: Պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 24 364 200 (քսանչորս միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար.

2) արոտավայրերի մակերեսային բարելավում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 7 680 000 (յոթ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումար: Մակերեսային բարելավման՝ թփուտներից մաքրման ենթակա է 128 հեկտար արոտավայր: Արոտավայրի մակերեսի հաշվարկն իրականացվում է ռելիեֆային առանձնահատկություններից ելնելով՝ օգտագործելով համապատասխան գործակիցներ.

3) միջդաշտային ճանապարհների փշալարապատում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 8 370 700 (ութ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար.

4) միջդաշտային ճանապարհների բարեկարգում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 6 200 000 (վեց միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար.

5) արոտավայրերի օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովում.

6) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված արոտավայրերի օգտագործման ժամանակացույցի հաստատում:

4. Աշխատանքների ֆինանսավորում.

1) արոտների ջրարբիացման և միջդաշտային ճանապարհների փշալարապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա.

2) համայնքների ղեկավարները արոտավայրերի մակերեսային բարելավման, ջրարբիացման, միջդաշտային ճանապարհների բարեկարգման, փշալարապատման աշխատանքների իրականացման համար ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հետ կնքում են պայմանագրեր (համայնքների ղեկավարներն արոտավայրերի մակերեսային բարելավման աշխատանքներն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում են տեղեկություն՝ մակերեսային բարելավման ենթակա արոտավայրերում առկա համարակալված ծառերի վերաբերյալ՝ ներկայացնելով նաև անտառների կայուն կառավարման բնագավառում պետական լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան թույլտվությունը): Պայմանագրերով նախատեսված

աշխատանքների ավարտից հետո համայնքների ղեկավարները կատարված աշխատանքների կատարողականները ներկայացնում են նախարարություն.

3) սույն կետի 2-րդ ենթակետով նշված աշխատանքների իրականացման համար նախատեսված գումարները՝ նախարարության և համայնքների միջև կնքված պայմանագրերի հիման վրա, աշխատանքների ավարտից հետո համայնքների ղեկավարների կողմից ներկայացված կատարողականի՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում տրամադրվում են համայնքներին:

5. Նախարարությունը համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

6. Սույն Ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքների շինարարության ավարտից հետո, դրանք կարող են շահագործման նպատակով հանձնվել շրջանի վարչակազմի ենթակայությամբ գործող կազմակերպությանը, որը կրում է տվյալ ենթակառուցվածքի հետագա պահպանման և սպասարկման պարտավորությունները:

7. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի «Անասնապահության կանոնակարգում և արոտների կառավարում» ծրագրով՝ հետևյալ ուղղություններով՝ համաձայն N 1 աղյուսակի, այդ թվում՝ ըստ համայնքների՝ համաձայն N 2 աղյուսակի:

Աղյուսակ N 1

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	***Ներդրումների նպատակը***	***2020թ.***	***Այդ թվում՝ ըստ եռամսյակների***			
			1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**25.0**	-	-	25.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**1 650.0**	-	-	990.0	660.0
3	Արոտների ջրարբիացում	**24 364.2**	-	-	14 618.5	9 745.7
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**974.55**	-	-	584.83	389.72
5	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**7 680.0**	-	-	4 608.0	3 072.0
6	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	**8 370.7**	-	-	5 022.4	3 348.3
7	Փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**334.8**	-	-	200.9	133.9
8	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**6 200.0**	-	-	6 200.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***49 599.25***	-	-	***32 249.63***	***17 349.62***

Աղյուսակ N 2

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Ծովափեղ համայնք

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2020թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**5.0**	-	-	5.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**330.0**	-	-	198.0	132.0
3	Արոտների ջրարբիացում	**7 576.3**	-	-	4 545.78	3 030.52
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**303.05**	-	-	181.83	121.22
5	Մակերեսային բարելավում(1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**600.0**	-	-	360.0	240.0
6	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**800.0**	-	-	800.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***9 614.35***	-	-	***6 090.61***	***3 523.74***

Հերհեր համայնք

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2020թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**5.0**	-	-	5.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**330.0**	-	-	198.0	132.0
3	Արոտների ջրարբիացում	**4 061.5**	-	-	2 436.9	1 624.6
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**162.5**	-	-	97.5	65.0
5	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**1 020.0**	-	-	612.0	408.0
6	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	**8 370.7**	-	-	5 022.4	3 348.3
7	Փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**334.8**	-	-	200.9	133.9
8	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**800.0**	-	-	800.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***15 084.5***	-	-	***9 372.7***	***5 711.8***

Խերխան համայնք

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2020թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**5.0**	-	-	5.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**330.0**	-	-	198.0	132.0

3	Արոտների ջրարբիացում	**5 589.4**	-	-	3 353.6	2 235.8
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**223.6**	-	-	134.2	89.4
5	Մակերեսային բարելավում(1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**2 220.0**	-	-	1 332.0	888.0
6	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**1 200.0**	-	-	1200.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***9 567.9***	-	-	***6 222.7***	***3 345.2***

Մսմնա համայնք

Հ/Հ	***Ներդրումների նպատակը***	***2020թ.***	***Այդ թվում՝ ըստ եռամսյակների***			
			1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**5.0**	-	-	5.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**330.0**	-	-	198.0	132.0
3	Արոտների ջրարբիացում	**2 978.4**	-	-	1 787.0	1 191.4
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**119.1**	-	-	71.5	47.6
5	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**2 940.0**	-	-	1 764.0	1 176.0
6	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**1 600.0**	-	-	1 600.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***7 972.5***	-	-	***5 425.5***	***2 547.0***

Կավահան համայնք

Հ/Հ	***Ներդրումների նպատակը***	***2020թ.***	***Այդ թվում՝ ըստ եռամսյակների***			
			1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**5.0**	-	-	5.0	-
2	Մոնիթորինգ, ծրագրի վերահսկողություն և աշխատանքների ընդունում	**330.0**	-	-	198.0	132.0
3	Արոտների ջրարբիացում	**4 158.6**	-	-	2 495.2	1 663.4
4	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**166.3**	-	-	99.8	66.5
5	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 60000 ՀՀ դրամ)	**900.0**	-	-	540.0	360.0
6	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1 մետրի հաշվով 2000 ՀՀ դրամ)	**1 800.0**	-	-	1 800.0	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***7 359.9***	-	-	***5 138.0***	***2 221.9***

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

8. Սույն Ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) իրականացվող ներդրումների հաշվին կկատարվեն 128 հեկտար արոտավայրերի մակերեսային բարելավման և ջրարբիացման աշխատանքներ, ինչի արդյունքում կավելանան արոտավայրերի արդյունավետ օգտագործվող մակերեսները, կբարձրանա դրանց բերքատվությունը.

2) արոտավայրերի բերքատվության բարձրացման հետ մեկտեղ կավելանան կենդանիների մթերատու հատկանիշները և անասնաբուծական մթերքների արտադրական ծավալները.

3) կստեղծվեն անխոչընդոտ նախադրյալներ համայնքներում բուսաբուծության զարգացման համար.

4) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը և կավելանան եկամուտները.

5) կբացառվեն համայնքների տարածքում գյուղատնտեսական կենդանիների առանց հսկողության արածեցման դեպքերը:

9. Ծրագրի արդյունքային ցուցանիշները ներկայացված են N 3 աղյուսակում:

Աղյուսակ N 3

ՀՀ	Համայնք	2019 թվական							2020 թվական			
		Գլխաքանակ			Արտադրությունը միս, ցենտներ		Կաթ, ցենտներ	Կովի կաթնատվությունը, լիտր	Կարտադրվի միս, ցենտներ		Կաթ, ցենտներ	Կովի կաթնատվությունը, լիտր
		ԽԵԱ	որից՝ կով	ՄԵԱ	ԽԵԱ	ՄԵԱ			ԽԵԱ	ՄԵԱ		
1	Ծովատեղ	201	91	446	240.2	77.6	2138.5	2350.0	300.3	97.0	2459.3	2702.5
2	Հերհեր	170	76	89	200.6	15.5	1801.2	2370.0	250.8	19.4	2071.4	2725.5
3	Խերխան	109	50	40	132.0	7.0	1185.0	2370.0	165.0	8.7	1362.8	2725.5
4	Մսմնա	37	14	0.0	37.0	0.0	326.2	2330.0	46.2	10.9	375.1	2679.5
5	Կավահան	78	35	0.0	92.4	0.0	815.5	2330.0	115.5	10.9	937.8	2679.5
Ընդամենը		**595**	**266**	**575**	**702.2**	**100.1**	**6266.4**	**2355.8**	**877.8**	**146.8**	**7206.4**	**2709.2**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա.ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքներում անասնապահության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագրի անհետաձգելիորեն իրականացման անհրաժեշտությամբ:

Գյուղատնտեսական կենդանիների կերակրման մակարդակի բարձրացումը, նրանց լիարժեք և հավասարակշռված կերաբաժիններով ապահովելը առաջին հերթին կախված է հզոր կերի բազայի ստեղծումից, որն իր հերթին պայմանավորված է արոտավայրերի մակերեսային բարելավումից, ջրարբիացումից, բարձր բերքատու կերային կուլտուրաների լայն մշակումից և արոտավայրերի օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովումից:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքներում արոտավայրերը գերծանրաբեռնված են, չկան հերթափոխ արածեցման գործող մեխանիզմներ, ինչը տարիների ընթացքում պատճառ է հանդիսացել բարձրարժեք ընդեղեն կերաբույսերի տեսակների, ինչպես նաև ստացվող կերի քանակի և որակի նվազեցմանը: Արոտավայրերի գերակշիռ մասը թփակալված է, իսկ որոշ մասերում թունավոր և կերակրման համար ոչ պիտանի բույսերը գերակշռում են բուսածածկում:

<u>Նպատակը և բնույթը</u>

Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքներում բացառել արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու գտնվելու դեպքերը, ստեղծել նախադրյալներ համայնքներում անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման համար, ինչի շնորհիվ՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ բարձրացնել արոտների արդյունավետությունն ու կերային արժեքը, վերականգնել բուսածածկը, կանխել հողերի հետագա դեգրադացման վտանգը, ստեղծել նախադրյալներ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման, նախրի և հոտի կառավարիչների համար աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև անասնաբուծության և բուսաբուծության զարգացման և գյուղացիական տնտեսությունների կենսամակարդակի բարձրացման համար:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Ծրագրի իրականացման արդյունքում Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքներում կկանոնակարգվի անասնապահությունը, կիրականացվի արոտավայրերի ռացիոնալ օգտագործում, կավելանա անասնապահական մթերքների քանակները, կբարձրանան գյուղատնտեսական կենդանիների մթերատվական հատկանիշները:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա. ԲԱԽՇԻՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի մի շարք համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն
4. ԱՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
5. ԱՀ շրջանների վարչակազմեր

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____ ***Ն. Մուսայելյան***

(ստորագրությունը)

«___» _____ 2020 թ.